

Ծ Ւ Ա Ծ Ա Ն

ՔԱՂԱՔԱԿ ԱՆՔ, ՆՈՐԱԼՈՒՐՔ ԵՒ ԶՈՒՄՐՃԱԼԻՔ

ՆԱՄԱԿ ԱԹ ՀՐԱՑԱՐԱԿՈՂՆ

Գեղարքունիքի Մուրագան Skr,

Քաղաքիս գաւառական շաբաթագիրն իւր տեղական լուրերուն մէջ ի 6 հոկտեմբեր ամսոյս հրատարակեց յօդուած մի այսու վերնագրով. «Քրիգոր Լազարեան Քէպապճեանց»։ Այս նորահաս երիտասարդին բնական հարտարմութիւնը արդէն յայտնի էր՝ ինչպէս քաղաքիս հայազգեաց, նոյնպէս եւ ոմանց յօտարազգեաց, եւ բնական հակամիտութիւն ունելով մեքենական արիեստներու, իւր մասնաւոր պարապմանց մէջ՝ երեմն մտաց հանճարն եւ ծեռաց հարտարութիւնն եւս կփայլեցընէր։

Այս հայազգի երիտասարդն է Հին Երիմու քաղաքացի 22 ամաց՝ Քրիգոր Լազարեան Քէպապճեան, որ այս սեղի ժողովրդական Դպրոցին մէջ աշակերտութենէն յետքը մանրավաճառի չափաւոր առուտուրով կզբաղի, եւ իւր պարապորդժամանակը իւր բնական հարտարութիւնը կը անեցնէ։ Բաց յայսմանէ համեստ եւ պարկեշտ վարուքն եւս սիրելի եղած է մեր հասարակութեանը։ Բայց ուսւ շաբաթագրին հրատարակածը ընդհանուր զարմանաց եւ հետաքննութեան նիւթ ըրաւ նորա տաղմնդը՝ թէ ի՞նչպէս առանց մեքենական արիեստի ծառայելոյ այս շնորհալի երիտասարդը հարտար մեքենագործ մը երեւեցաւ քաղաքիս մէջ։

Մեր քաղաքին մեծ ժամացոյցը կախուած է նուսաց Ս. Աղեքսանդրի նեւացւոյ մայր եկեղեցւոյն մէկ գմբեթին վերայ. սորա անգործածելի մնալը տասուերկու տարիէն աւելի է. եւ մէջի զանազան քաղմատեսակ մեքենաներուն, այս տեղ գրտնուող շատ եւրոպացի եւ տեղական ժամացոյց

շինողներ խելք մասցընելով, կամ չեն յանձն առած շինել, եւ կամ մեծ գումար պահանջելով՝ այնպէս թողած էին։ Խվերջոյ այս երիտասարդը անցեալ ամսոյն մէջ թոյլուութիւն առաւ այն եկեղեցւոյ Հոգեւոր իշխանաւորներէն, ծեռք զարկաւ ծրի շինելու այն ժամացոյցը եւ յաջողութեամբ գլուխ հանեց. քանի մը հարկաւոր մեքենաներն իւր ծեռքովը նորոգելով բաւական բարակ, եւ քանի մի անիւներուն կոտրած ատամները կարկատելով, եւ ըստ ամենայնի մաքուր ժամացոյց մի գործատանէն նոր ելածի պէս՝ դրաւ տեղը, եւ մինչեւ ցայսօր այնպէս անսխալ կշարունակէ իւր ընթացքը, քառորդներու եւ ժամերու զանգակահարութիւնքը, որ բոլոր քաղաքիս լսելի կլինի. յոյս կայ որ մի եւ նոյն կերպով յաջողակ յարատեւութիւն ունենայ։

Տաւրիոյ շաբաթագրին խմբագրողն պէս եւ ես ինքնին իբրեւ ականատես կվկայեմ, որ այս տաղանդաւոր երիտասարդը գիտէ շինել նոր ժամացոյցներ, թէ՛ պատի եւ թէ ծոցի. հմուտ է բազմատեսակ մեքենայից շարժմանց, եւ մէկ անգամ տեսնելով՝ գիտէ առողջ դատողութեամբ նորաշնթացքը քննել եւ ապացուցանել։ Նմանապէս եւ երկրագործութեան մեքենայից համար, որ այս տարիներս բաւական շատցան թերակըւ զւյոյ մէջ, մէծ ընդունակութիւն ունի։

Այս երիտասարդիս բնական տաղանդը նոր ազգաբարեական ասպարէզ բացաւ տեղւոյս հայազգի երիտասարդաց. որ չսայելով թէ դեռ վաճառականութեան առաջին կամ երկրորդ քայլը կփոխեն, եւ տեսնելով իրենց ընկերին այսպիսի հարտարութիւնը, պարտաւորեցին իմ ներկայութեանս այն յիշեալ տաղանդաւոր երիտասարդը որ իրենց ծախիւքը շինէ նոր ժամացոյց մի քա-

դարիս Հայոց Վերափոխման եկեղեցւոյ նորակառոյց զանգակատանը համար , որ ինչպէս յայտնի է Սրբազն Տեառնդ՝ կկանգնէ իւր սեպհական արդեամբը բարեպաշտ եւ ազգասէր Մերկեռիս Աղայն ՄոմՅեան , նուիրելով չորս հազար արծաթ բուպի:

Նատ տեսակ մտածմունք պարտաւորեցին զիս , Սրբազն Տէր , խոնարիաբար խնդրել Զեզմէ որ բարեհանիք հրատարակել այս նամակս Զեր ազգալոյս Նիածանին մէջ :

Քանի՞ քանի այսպիսի տաղանդաւոր երիտասարդներ իրենց բնական հանճարը ծաղկեցնելոյ համար՝ չունելով միջոց , կամ ազգային նեռնուռնութիւն , հառաջանօք կանցընեն իրենց օրերը . որ եթէ Ազգային պաշտպանութիւն մի գտնելոյ , կամ Ազգին իրենց ընդունակութեանը յարմար վարժարաններ ունելոյ բարեբաղդութիւնն ունենային , հարկաւ Ազգիս մէջ կինէին գերահոչակ ծովանկար կամ պատկերահան , անուանի մեքենագործ , երեւելի բնալոյժ եւ համբաւաւոր նարտարապետ : Կմխիթարուիմ միայն այսու որ մեր նախնեաց բնական հանճարեղութիւնը կայ եւ այժմ իւր որդւոց մէջ , եւ տեղ տեղ այսպիսի գէպքերով կփայլի նաեւ օտար ազգաց առջեւը : Նոյնպէս կմխիթարուիմ որ մեր Ազգային նոր սերունդն եւս ունի ազգասիրական հոգի , որով իւր հասակակից ընկերին նարտարութիւնը չխնայիր փայլեցը նել իւր եկեղեցւոյ վերայ :

Ակն ունիմ որ մեր ազգասէր իշխանքն եւս կարդալով այս յօդուածը եւ Տաւրիոյ շաբաթագրին 40 համարը , չին խնայեր իրենց առատանեռնութիւնը՝ ուր որ տեսնեն այսպիսի տաղսնդաւոր նորահաս որդիք Ազգիս . կօգնեն նոցա բարեբարութեամբ՝ յուղարկելով տէրութեան վարժարանները որ ուսում առնուն , եւ իրենց բնական հանճարը կատարելագործեն :

Ակն ունիմ որ նաեւ Թերակղզւոյս Մեծարու հայազգի կալուածատէրները կդարձնեն իրենց

ազգասիրական նկատողութիւնը այս պատուելի Պ. Քէպապնեանին վերայ , իրենց երկրագործական մեքենայից պակասութիւնը լեցընելը յանձնելով նորա նարտարութեանը :

Եւ այս կթարգմանեմ այս յրյսերով այն գովարանական թերթը որ Պ. Քէպապնեանն ընդունեցաւ այն ժամացուցին նորոգութեան համար տեղւոյս թուսաց Հոգեւոր իշխանութենէն , եւ կդնեմ այս տեղ . «Տաւրիոյ գաւառի Հին Խրիմ քաղաքին «քաղաքացի Գրիգոր որդի Քէպապնեան Դազարու , ի կուսաւորչական Հայոց գաւանութենէ , «իծնէ ամաց 22 , բնական հանճարեղութեամբ «մտաց իւրոց սոտանալով զիմնաւոր իմտութիւն «շինելոյ մեքենայս ժամացուցի , յայսմ 1862 ամի ի «յունիսի ամսեան նորոգեաց զիվաղ ժամանակաց «շինեալեւ իբազում ամաց հետէ խանգարեալ ժամացոյց գմբեթին Մայր եկեղեցւոյ Սիմֆերովիի «որ յանուն Աղեմաների Նեացւոյ , առանց ինչ «պահանջից , որի : Եցոյց գոհունակութեան մերոյ «Ըսդ այսպիսի ջերմեռանդն եւ հանճարեղ վաս «տակ Պ. Քէպապնեանի , տուաւ նմա գովարա «նական թերթս այս յևագ Հոգեւորականաց եւ «յերեցփոխանէ այսը Մայր եկեղեցւոյ կանոնաւոր «սոտրագրութեամբ եւ կնքով : «իմիմֆերովի , ի10 սեպտեմբերի 1862 ամի » :

Կնքելով զնամակս որդիական խորին ակնածութեամբ , բարեբաղդ զանձն իմ համարիմ մնալ

Մրազան Տեառնդ

Անձնանուել ճառաց

Առաջ Քանանայ Յանոր Սուրենաւու

